պէս առաջի բոլոր Հոգևորականացդ զայս վաղեմի Հայրենաւանդ կարգաւորաց վայելուչ բարեկարգութիւնս եդեալ ծանուցաք, և Հոգևոր Ժողովով մերով հաստատին յայտնեցաք։ Ուստի սիրոմն Յիսուսի Քրիստոսի յորդորեմք զամենայն կարգաւորսդ ընդ մեզ նախանձաւոր սուրբ կրօնից գտանիլ, և անխափան զայս գեղեցիկ կանոնս նախնեաց մերոց ընդ այլ պարտուպատշաճ կանոնաց եդելոց ի վերայ կարգաւորացս պահել, և պահել տալ ջանասիրեսջիք յորդորանօք՝ խստիւ՝ և սպառնալեօք։

Որ և լսող և կատարողդ ըստ գրութեանս կացջիք ողջ և անփորձ փառաւորեալ ըստ Հոգւոյ և ըստ մարմնոյ ի պարծանս լրութեան Աղգիս և յօգուտ սրբոյ Եկեղեցւոյ մերոյ յաւիտեանս ամէն։

Գրեցաւ խորատական կոնդակս 1851 Հոկտեմբ. 15. ի Պատրիարքարանս ամենայն Հայոց։[1])

---

## Ս. ՆԱՂԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ցամի 1846 ի Նոյեմբերի 26.

Մեծապատիւ և գիտնական Եփրեմայ Ասպետ վարդապետի

Ս. Նաղարեանց խնդալ յարգանօք։

Զգրեալդ ի 30 թուականէ անցելոյ Հոկտ. ստացեալ մեր անկորուստ 50 արծաթով հանդերձ, սակաւուք պատասխանի ձեզ առնել ոչ դանդաղիմք, մանաւանդ զի և զայս իսկ ի ձէնջ աղաչիմք՝ առանց թողացուցանելոյ հարուստ ժամանակի ի մէջ անկանիլ։

Զքանակութիւն ընծայելոցն առ ի տեարց Լազարեանց որ ի տպագրութիւն համառօտ իմոյս աշխարհապատում մատենի անգիտացեալ մեր ապաքէն՝ զի ոչ ոք յայտարար այսորիկ մեզ գտաւ, և ոչ իսկ գուշակել մարթացեալ թէ քանի՞ ինչ ի հաւաքելոցն առ ձեզ յումմէ՝ առեալ եղև, յանել բաւիղ տարակուսանաց ցայսօր գտանէաք պարանեալ. և ոչ չափ ինչ. այլև ծագեցան մեզ այլուստեք անլուծանելի

[1]) Այս կոնդակը ստացել ենք մեծ. պ. Ա. Երիցեանից։ Ծ. Խ.

դժուարութիւնք։ Քանզի ճեմական Թրօսէ՝ որում յանձն եղև ի դատ և ի կշիռ մատուցանել զաշխատութիւն մեր զայն, առ ի թոյլ տալ տպել զնա արքունի ծախուք, արգել եղև գործոյն յառաջատուութեան՝ մտացածին պատճառանս պատճառելով, որպէս զի ոչ գիտել մեր տակաւին զո՛ւր լինելն և զի՛նչ գործիլն ընդ մերումս երկասիրութեան ոչ այլ ինչ մնայր մեզ հնարաւոր, բայց միայն ի կարգի եդեալ զառաջին ուրուական մերոյս աշխատութեան, անձնական ծախուք ի տիպ զայն մուծանել. այլ և առ այս՝ անբաւական զմեզ արարին պատուական բարեկամք՝ թեթևամտեալ կարծելով՝ եթէ հնար ինչ իցէ 50 արծաթով ձեռն ի գործ արկանել, և զանձանցն միայն խնդրելով, այլ ոչ զօգուտ իմանալի՝ զՀայրենի ազգին։ Ցաւեցուցանեն զիս այո՛ գնացք ձեր ընդ մեզ, և ոչինչ գովութեան արժանի զձեզ կացուցանեն։ Ես՝ որ ծանրաբեռնեալս եմ ընտանեկան հոգոբ և այն ի թաթարեանն Ղազան՝ ուրկեցութիւնն մարդօրէն պէտս ունի բազմաց, խղճայցեմ ապաքէն ըստ ձեզ ընթանալ ընդ այր մաշեցուցանող զկեանս իւր վասն հասարակացն օգտի, և այն՝ անվարձ յամենայնի։ Այլ դո՛ւք այր անկին և բազմօք լաւ ևս քան զիս հոգացեալ յառատութեան տեարց Ղազարեանց...։ Թողումք ատանօր ի պատերազմ ընդ ձեզ կաքաւել, ըստ որում ոչ ինչ մեզ յախորժականացն՝ թէև է արդարացի պատճառ՝ խռովել զանդորրութիւն սրտի մերոյ։

Ցընթացս երից արդէն ամաց ստացեալ ի ձէնջ 50 արծաթ միայն յընծայելոցն ի տեարց Ղազարեանց հարիւրոյ, մնայաք, սպասէաք ի պատրաստի լինելոյ այլոյ երկասիրութեան՝ զոր մարթ էր դիւրագնոյ ևս ի տիպ արձանացուցանել. այլ և այս հանդիպեցաւ այլազգ քան զոր կարծէաքն։ Վշտացեալ ամենայն ուստեք, չքաւոր ըստ չափ, և այնպէս հարկադրեալ գտաք բառնալ ի բերանոյ ընտանեաց մերոց 120 մանէթս առ ի տպել զաշխատութիւն մեր՝ որ առաջիկայ է ձեզ ի Ս. Պետերբուրգ։ Թո՛ղ զտաժանութիւնս մեր անթիւս համարաւ՝ զորս չէ՛ ապաքէն ձեզ դատել։ Զխնդիր ձեր՝ հատուցանել ձեզ զմուրհակ վճարեալ դրամոցն մինչև ցայսօր, ո՛չ այլազգ կատարել հնարաւորիմ՝ բայց միայն ստացեալ ի ձէնջ զմնացեալ 30 մանէթան. վասն

զի ցո՛ւչափ յերկար անագանեսցին դոքա, մինչափ իսկ յերկար մնայ ընծայատուացն սպասել ստանալոյ զստմանեալ քան օրինակն մերոյ աշխատութեան՝ որ շարագրեալ ի Ռուս լեզու՝ իբրև տեսութիւն դպրութեան Հայոց ի նոր և ի նորագոյն ժամանակս, և՝ հասկանալի և՝ սխորժ ևս ունիցի լինել Հայոցդ մերոց։ Իսկ որ Հայի յօրինակսն՝ զորս պարտականութիւն է մեր հասուցանել առ Լազարեանս (սոքա ստացեալ են արդէն երիս), եթէ միայն կամեսցին, և յայլն ամենայն. զայդ՝ անձամբ վճարեսցուք. վասն զի ոչ կամելով նոցա զաշխատութիւնս զայս համարիլ մեզ փոխարէն ընծայելոյն իւրեանց, յայնժամ կա՛զմ և պատրաստ եղիցուք փութացուցանել առ նոսա զՀոգեպատում մատեանն մեր գրչագիր՝ որ փոքր մի ևս և լիցի աւարտեալ։

---

## Ս. Նազարեանց պատուարժան Եփրեմ վարդապետի Խնդալ.

Սակաւ ինչ ոգի առեալ յանդուլ յայսկոյս և յայնկոյս շարժողութեանցս՝ փութամ ծանուցանել պատուականիդ՝ թէ յամսոյս 26 թուականի ողջ և առողջ ժամանեցաք ի Մոսկվա ի չորրորդ ժամու զկնի միջօրէին։ Իջևան իմ է ի տան նորին քաջափայլութեան տեառն Լազարեանց, ուր և կերակրիմ ազատաբար՝ պաշտեալ պատշաճապէս ի ծառայից արագաշարժից և գամենայն ինչ առանց և իմ, ազդելոյ քաջ տնօրինողաց։ Զմեծ մասն ժամանակիս հանեմ առ այլս արտաքոյ բնակութեանս, երբեմն առ պատուական քեռ Քրիստափորի Լազարեանց տիկնոջն Եղիսաբէթի Ցովակիմեան, իսկ երբեմն առ այլս ի Հայկազանց մերոց՝ ատ բնակացելոց։ Ստացայ այսօր զպատասխանի խնդրոյս ի Քրիստափորայ Լազարեանց՝ որ հաւան է կարդել զիս ուսուցիչ պարսիկ և արաբացի դպրութեան՝ յանձնելով ինձ ընդ նմին և դասատուութիւն լատինականին հանդերձ լի կատարեալ թօշակօք, որ է յամին 1360 մանէթ. առանց օթևանի։ Եւ ես չեմ ինչ այդմ անհաւան և ոչ իսկ հոգամ զիմս առանց օթևանի լինել. վասն զի այդ ամենայն յաւելցի ինձ այլով ճանապարհաւ. և բաբեկամք մեր այսր հոդ տարցին

այդմ փոխարինելով շնորհս ընդ շնորհաց յիմոյս կողմանէ՝ որով և ձեռնհաս իցեմք, այն է ուստիարակութեամբ Հայ մանկուոյն։ Ցաւուրս յայսոսիկ այցելու եղէ դպրոցի Լազարեանց՝ առաջնորդելով ինձ տեառն Քրիստափորի Լազարեանց, տեսի զցուցակ ասիական գրեանցն՝ յուսումն արևելեան լեզուաց կարգելոց. գտի բազում ինչ հայթայթեալ արդէն, և բազում ինչ ոչ տակաւին։ Քաղցր եղև ինձ ի լինելս ի մէջ Հայոց մերոց տեսանել դէմս պայծառս և ուրախս, ոչինչ հոգացեալ զոմանց կեղծաւորութիւն կամ զվերին երեսօք միայն բարեկամասիրութիւն։ Մինչև ցայսօր չէ ստացեալ իմ նամակ յընտանեաց մերոց՝ որ ի Դօրպատ՝ որում կարօտակէզ սպասէ սիրտ ամուսնոյս և ծնողիս համանգամայն. եթէ զայն ստացեալ իցէ քո յանուն իմ, փութացուցանել աղաչիմ՝ պատրուակ նամակիդ գրելով օրինակ զայս. Въ армянскомъ переулокъ въ домѣ госп. Лазаревыхъ. զանուն և զաստիճան իմ գիտես և առանց իմոյս ծանօթանութեանս։ Ընդ լսելն զիմս արձակումն ի պաշտամանէ նախարարին ազգային լուսաւորութեան, կանխեցից ի Ղազան առ ի կարգի դնել զգործս իմ և տալ բերել զբազմահատոր մատեանս իմ ի Մոսկվա։ Ուրախ է սիրտ մեր տեսանելով զմեզ շուրջ պատեալ ի հայկազանց, թէպէտ զբազումս ի սոցանէ ոչ ճանաչեմք տակաւին, թէպէտ և ցանկամք ճանաչել սրտի մտօք։ Տեղի տացցէ այժմ ատելութիւն և տարրասցի ի մէջ մեր ոգի սիրոյ և հայրենասիրութեան. ա՛յսպէս և ո՛չ այլազգ դեղ դարմանի գտցէ իւր խոցոտեալ ազգ մեր։ Բժիշկն մերձ կայ. կացցե՛ն և ախտացեալքն. բայց որ բժշկէն, բժշկէ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ և ոչ յանուն սատանայի և արբանեկաց նորա։ Ողջունեցի ի Քէն զպատուելի Մսուրն և զաւագսարկաւագ Ցարութիւն Կեօքչէ-Ալամդարեան. ողջունեալքն ի քէն ողջունեն զքեզ զնոյն ողջոյն սիրոյ և յարգանաց։

Ո՛ղջ լեր և անմոռաց զիս պահեա

զՀարազատս քո

զՍտեփաննոս Նազարեանց։

Ի յուլիսի 29 թուականի
յամի տեառն 1849
ի Մոսկվա.

---

## Մեծապատիւ և յոյժ սիրեցեալ բարեկամի մերում

### Տեառն Եփրեմայ Սաֆարեանց

### Բազմասցի՝ ողջոյն սիրոյ և յարգանաց

Իմս առ ձեզ բազում մասամբք և օրինակօք շնորհապարտութիւն վասն բարեկամասիրութեանն առ ի ձէնջ ցուցելոյ առ ամուսին իմ ի Պետերբուրք, առաւելու ապաքէն և յարգելի նամակօք ձերովք՝ ժամանակաց ի ժամանակս առ իս ժամանելոյ և՝ զոր ամաչեմ ասել՝ անպատասխանի առ յինէն մնացելոց, ոչ նկատմամբ և ախորժելով, այլ յոչ կամաց՝ առ զանազան իրողութեանց ներքնոց և արտաքնոց՝ խափան ընդ մէջ անկելոց։

Ցանձն եղեալն առ ի ձէնջ իմումս անօսրութեան պատանին Գանջիեվ առ նուազ յառաջադիմութեան իւրոյ ի մաթեմաթիքական ուսմունս հարկաւորի յամի յայսմիկ մնալ ի վեցերորդ զինմազիական դասատան. և այսմ գուցէ թէ հնար էր ճարակ մատուցանել, եթէ Գանջիեվ պատանիդ յառաջագոյն ծանուցեալ էր ինձ զիւրոյն տկարութենէ յառարկայիդ յայդմիկ, առ ի բարեխօսել վասն նորա առ ծանօթն մեր վարժապետն չափաբանութեան, պարոն Նովիցկիյ. բայց զի խօսեցայց արդարութեամբ. վնաս ի մնալոյ պատանողդ ամ մի երկար ի դպրոցիս հասանիցի դմա և ոչ մի, վասն զի դեռ պատանի է դա։

Մնայ ինձ այժմ խօսել ընդ ձեզ զոմանց իրաց անձնականաց. առ որս հարկաւոր տեսանի բարեկամական գործակցութիւն ձեր. կամք են իմ ի տիպ մուծանել զերկասիրութիւն իմ՝ մակագրեալ «Հոգեբանութիւն համառօտ» հանդերձ երկայնախօս յառաջաբանիւ զոմանց կարևոր խընդրոց մերոյս ժամանակի առ ի հայոց ազգէ, ուր առանց աչառութեան և երեսպաշտութեան ճառ լինի զգրոց լեզուէ հայոց և զնորոյն, զպիտանութենէ նորոյս դպրութեան, նոյն և զանփոյթութենէ հայորերոյ զկազմակերպութենէ աշխարհիկ լեզուին, որպէս զի իցէ կամուրջ և ճանապարհ լուսաւորութեան, որպէս առ եւրոպէացիս։ Զայս աշխատութիւն առաքեցաք առ Խրիստաֆոր Եակիմիչ Լազարեվ՝ խնդրելով ի

նմանէ հոգ տանել վասն դատաքննելոյ զայն առ ձեզ. և յայտ է ապաքէն, թէ մի ի դատաքննողաց իմոյս աշխատութեան լիջիք և դուք, բաց յայլոցն, որպիսիք մեզ թուին Ասկարխանեանն, գուցէ և, ծերունին Խուդաբաշեան և նմանիք։ Այո՛ չէր ամենևին տեղի խնդրանաց և պաղատանաց անդ՝ ուր խօսէր բերան անկաշառ արդարութեան, բայց առ Հայս մեր խիթարի են միշտ բանք արդարախօսին, կեղծաւորութիւն և ստախօսութիւն և շողոմաբանութիւն նախամեծար պաշտին և վարձատրին, մինչ արդարախօսն և ստոյգ հայրենասէրն ոչ միայն անվարձ մնայ, այլ և բամբասել, հալածել և անարգել դատապարտի։ Ասա՛ ուրեմն հարկաւոր է պաշտպանութիւն արդարասէր բարեկամաց առ ի ոչ թէ յաղթող հանդիսացուցանել զճշմարտութիւն, այլ գոնեայ առ ի տալ նմա անցանել յասպարէզ հրապարակի, ուր ամենայն ոք կարիցէ փորձել զնա և ընդունիլ կամ չընդունիլ։ Զոր ինչ խօսեցաք ի յառաջաբանին՝ զբազմաց ի մերոյնոց ունի խոցոտել զսուտ անձնասիրութիւն. բայց անարատ է խիղճ մտաց մերոց առաջի Աստուծոյ և մարդկան. զոր ինչ ասացաք, սիրելով զազգն և ցանկանալով Նորին բարւոյ ասացաք և ոչ զոք թշնամանեալ գիտեմք։ Զոր ասեմս, ինքնին բացափայլեալ տեսջիք յամենայն ի բանս մեր, միայն թէ աղատ յամենայն ի կանխակալ վարկածից ի քննութիւն իրին գալ ախորժիցիք։ Ի ցանկալեացն էր ինձ յոյժ՝ տեսանել փութով զհնարաւորութիւն տպելոյ մատենիդ որոյ կարևորութիւն և օգուտ չէր այնքան ի հոգեբանութեան անդ ամփոփեալ, որչափ ի յառաջաբանին, ուր կարծեմ զառաջինն հայք լսել ունին թէ որպէս ընթացաւ եւրոպա և եհաս գերագոյն այսոցիկ բարգաւաճանաց, որովք բարձր ի գլուխ քան զամենայն ազինս պանծայ։ Որպէս և է դատ և դատապարտութիւն բանագէտ արանցդ ի Պետերբուրք առ մերս վաստակ բազմադաժան, աղաչեմք զձեզ փութալ յայտնել մեզ, մինչ այն հասեալ իցէ ի ձեռս ձեր և այլոց՝ թէ զի՛նչ համարումն իցէ զգործոյ աշխատաւորիս։

Նորութիւնք ի դպրոցիս են. հանումն Զինովիև Ռուսին ի պաշտամանէ տեսչութեան և փոխանակ կարգումն պարոն Էմինայ առ այդ պաշտօն. իսկ զիս պարոն Լազարեանք անարժան այդմ տեսին։ Ոչ բարկանամ ի վերայ գոցա, զի ոչ

ճանաչեն զխաչին ընդ իս և ընդ դա. Հաստ ու բարակ մի գնի, վա՜յ գայ բարակ մանողին։

Ողջունելով զձեզ ի դիմաց ամուսնոյ իմոյ և երեխայից

Մնամ պատուականիդ անփոփոխ սիրով

Հարազատ ձեր

Ս. Նազարեան

Ի 10 Սեպտ.
1850
Ի Մոսկվա